ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
««ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտերի անհրաժեշտությունը.

««Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», (այսուհետ՝ Նախագիծ) ««ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ բոլորը միասին՝ Նախագծեր) ներկայացումը բխում է հեղինակային իրավունքի բնագավառի հարաբերությունները կարգավորող օրենսդրության կատարելագործման անհրաժեշտությունից:

2. Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

Տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ ներկայումս աշխարհում ընդլայնվում են գրականության, գիտության և արվեստի բնագավառների ստեղծագործությունների օգտագործման և տարածման հետ կապված հնարավորությունները, ինչն իր հերթին հանգեցնում է նոր և չկարգավորված իրավահարաբերությունների առաջացմանը: Այսօր թվային միջավայրում և գլոբալ ցանցերում ստեղծագործությունների օրինական օգտագործումն ապահովելու նպատակով անհրաժեշտ են հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պահպանության հուսալի և արդյունավետ միջոցներ:

Գործող «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի մի շարք դրույթներ չեն համապատասխանում ներկայումս միջազգային պրակտիկայում կիրառվող որոշ մոտեցումներին և ենթակա են վերանայման: Մասնավորապես, օրենքի ընդունումից հետո մշակվել և ուժի մեջ են մտել երկու նոր միջազգային պայմանագրեր:

«Տեսալսողական կատարումների մասին» 2012 թվականի Պեկինի պայմանագիրը նպատակ ունի կատարելագործել կատարողների իրավունքները և նրանց տրամադրել ավելի արդյունավետ ու միատեսակ պահպանություն:

2013 թվականին Մարաքեշում ընդունված «Կույրերի, տեսողական խնդիրների հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած կամ ընթերցողության այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների հասանելիությունը դյուրացնելու մասին» պայմանագիրը նախատեսում է հեղինակային իրավունքի որոշակի սահմանափակումներ, որոնք հնարավորություն կտան հաշմանդամություն ունեցող անձանց՝ ավելի լիարժեք ու արդյունավետ մասնակցելու և ներգրավվելու հասարակական և մշակութային կյանքին:

Գործող օրենքի այն դրույթները, որոնք վերաբերում են ուսումնական հաստատությունների և գրադարանների կողմից ստեղծագործությունների վերարտադրմանը, չեն համապատասխանում ներկայիս պահանջներին և այդ կապակցությամբ անհրաժեշտություն կա հստակ սահմանափակումներ մտցնել այդ ստեղծագործությունների իրավունքների նկատմամբ: Նախագծում ընդգրկված հեղինակային իրավունքի սահմանափակումները նպատակաուղղված են հանրության շրջանում գիտելիքի, մշակութային արժեքների, ստեղծագործությունների էլ ավելի լայն հասանելիության ապահովմանը: Դրանք հնարավորություն կտան կրթական հաստատություններին և գիտահետազոտական ինստիտուտներին, գրադարաններին ու արխիվներին ոչ առևտրային հիմունքներով ստեղծագործություններ մատակարարել միմյանց՝ իրենց ընթերցողներին տրամադրելու, ինչպես նաև ստեղծագործությունների օրինակներն ուսանողներին ներքին ապահով ցանցերի միջոցով տրամադրելու համար:

Գործող օրենքով լիարժեք կարգավորված չէ գույքային իրավունքների կոլեկտիվ կառավարման համակարգը, որը կատարելագործման կարիք ունի: Նախագծում նախատեսվում է մտավոր սեփականության ոլորտում պետական լիազոր մարմնի կողմից գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների հավատարմագրման գործընթացը և հավատարմագիր ստանալու համար անհրաժեշտ պայմանները: Նախատեսված են դրանց գործունեության նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմներ: Փոփոխություններով նախատեսվում են կոլեկտիվ կառավարող կազմակերպության նկատմամբ խիստ պահանջներ, որոնք գործադրվելու են առաջին հավատարմագրումից

հետո: Ընդ որում, հավատարմագրման կարգը սահմանվելու է ՀՀ կառավարության կողմից, որից հետո պետական լիազոր մարմնի կողմից ձևավորվելու է հանձնաժողով՝ հավատարմագրման գործընթացը կազմակերպելու նպատակով: Մասնավորապես՝ կազմակերպությանն անդամակցող իրավատերերին իրավունք է վերապահվել ստուգել տարեկան հաշվետվությունները, ծանոթանալ իրենց հասանելիք հոնորարների հաշվարկման-բաշխման փաստաթղթերին, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, հրավիրել անկախ աուդիտ: Կազմակերպության գործունեության վերահսկողության իրավունք է վերապահվել նաև պետական լիազոր մարմնին: Բացի այդ, հաշվի առնելով, որ կոլեկտիվ կառավարող կազմակերպություն կարող է լինել ցանկացած ոչ առևտրային իրավաբանական անձ, ներառյալ՝ հիմանդրամ, որը չունի անդամություն, ուստի նախատեսվել է նաև կարգավորում անդամություն չունեցող կազմակերպությունների դեպքում որպես շահառու իրավատերերին ներկայացնելու մասով, որոնք օրենքի իմաստով հավասարեցվում են անդամներին: Նշվածը բխում է նաև եվրոպական փորձից, և նախագիծը մշակվել է հիմք ընդունելով կոլեկտիվ կառավարման վերաբերյալ ԵՄ 2014/26/EU դիրեկտիվի կարգավորումները:

Ավելին, հեղինակային ու հարակից իրավունքներին առնչվող ԵՄ 2019/790 դիրեկտիվով սահմանվում է անդամ պետությունների համար ընդլայնված կոլեկտիվ կառավարումը, որը փաստացի գործում է այնպիսի երկրներում, ինչպիսիք են Գերմանիան, Ֆրանսիան, Պորտուգալիան, Նիդերլանդները և այլն: Նման կարգավորումը հնարավորություն է տալիս պետության կողմից հավաստագրված կոլեկտիվ կառավարող կազմակերպությանը ներկայացնել նաև իր անդամ չհանդիսացող իրավատերերի շահերը:

Նշված փոփոխություններով, միաժամանակ օրենսդրությունը համապատասխանեցվել է նաև ԵԱՏՄ շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Հեղինակային և հարակից իրավունքների՝ կոլեկտիվ հիմունքներով կառավարման կարգի մասին» համաձայնագրի պայմաններին:

ՀՀ-ի վերոնշյալ վավերացրած համաձայնագրով անդամ պետություններին տրվում է իրավասություն՝

- սահմանելու կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների հավատարմագրման ու վերահսկողության ընթացակարգեր,

- ապահովելու ընդլայնված կառավարման հնարավորություն՝ այն դեպքում, երբ իրավատերը չի կնքել անհատական պայմանագիր, սակայն նաև դեմ չի արտահայտվում նրա կողմից իր իրավունքների կառավարմանը:

Համաձայնագիրը բացահայտորեն ճանաչում է, որ հնարավոր է յուրաքանչյուր ռեպերտուարի համար սահմանել մեկ հավատարմագրված կազմակերպություն, որն իրավունք ունի կոլեկտիվ հիմունքներով կառավարել այդ ռեպերտուարի բոլոր իրավունքները, ներառյալ՝ այն իրավատերերինը, ովքեր առանձին պայմանագիր չեն կնքել, սակայն չեն էլ հրաժարվել իրենց իրավունքների կառավարումից:

Այսպիսով՝ գործող ՀՀ օրենքն առերևույթ հակասում է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին, իսկ իրավակարգավորումները չեն ապահովում հավասարակշռություն իրավատերերի շահերի պաշտպանության և օգտագործողների մատչելիության, թափանցիկության և արդյունավետ կառավարման միջև:

Մյուս կողմից առկա օրենսդրությամբ սահմանված չեն խախտված իրավունքների պաշտպանության բավարար միջոցներ, ինչով պայմանավորված անհրաժեշտ է սահմանել հստակ փոխհատուցման չափեր: Մասնավորապես, գործող իրավական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պաշտպանության վերոնշյալ մեխանիզմները գործնականում միշտ չէ, որ բավարար չափով ապահովում են իրավատերերի իրավունքների համապարփակ պաշտպանությունը, քանի որ հաճախ գործնականում անհնար է ֆիքսել հոնորարի կամ վարձատրության մի չափ, որից հնարավոր կլինի հաշվարկել դրա կրկնակին, ինչպես նաև գործնականում իրավատերերը հաճախ զրկված են իրավախախտման հստակ ծավալներն արձանագրող ապացույցների հավաքման իրական հնարավորությունից, ինչի հետևանքով գրեթե անհնար է լինում հիմնավորել վնասի չափը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է վերանայել և արդիականացնել «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի համապատասխան դրույթները, մասնավորապես՝

- ներդնելով կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների հավատարմագրման ու պետական վերահսկողության ընթացակարգ,
- թույլատրելով այդ կազմակերպությանը ընդլայնված հիմքով կառավարել նաև այն իրավատերերի գույքային իրավունքները, ովքեր չեն հրաժարվել

կառավարմանը մասնակցությունից, նույնիսկ եթե առանձին պայմանագիր չեն կնքել:

- հստակցենել իրավունքների խախտման դեպքում փոխհատուցման չափերը:

Այս փոփոխություններն ուղղված են համապատասխանեցնելու ՀՀ օրենսդրությունը միջազգային չափորոշիչներին, բարձրացնելու կառավարման թափանցիկությունը և վերականգնելու իրավատերերի ու օգտագործողների կողմից համակարգի նկատմամբ վստահությունը:

Մի շարք խնդիրներ կան նաև մալուխային վերահաղորդումների հետ կապված հեղինակային իրավունքին և հարակից իրավունքներին առնչվող հարաբերությունների, ինչպես նաև տեսալսողական կատարումների ամրագրումների արտադրության և օգտագործման հետ կապված հարաբերությունների կարգավորման հարցերում:

Այս կապակցությամբ արդիական պահանջ է դարձել հեղինակային իրավունքի օրենսդրության վերանայումն ու նոր մոտեցումների սահմանումը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ներկայացմամբ: Քանի որ, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով ներկայացված են նոր մոտեցումներ, որոնց կիրառման արդյունքում փոփոխվել, լրացվել և նոր խմբագրությամբ են շարադրվել մի շարք նորմեր, որոնք նախատեսված են նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում, հետևապես՝ անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխությունները նախատեսել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում:

Բացի այդ, կատարելագործվել են նաև հեղինակային իրավունքի պաշտպանության մեխանիզմները՝ սահմանելով հեղինակային իրավունքի ու հարակից իրավունքների խախտման համար հստակ փոխհատուցման չափեր՝ օրենքով

սահմանված ֆիքսված փոխհատուցման հնարավորությամբ, իսկ օրենքի հիման վրա վարձատրության նվազագույն չափեր սահմանված լինելու դեպքում՝ դրանց կրկնակիի չափով փոխհատուցման կարգավորմամբ, ինչը կապահովի նաև կոլեկտիվ կառավարման արդյունավետությունը: Նման կարգավորումը բխում է միջազգային լավագույն փորձից, մասնավորապես՝ ֆիքսված փոխհատուցման ինստիտուտը գործում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Կանադայում, Սինգապուրի Հանրապետությունում, Ռուսաստանի Դաշնությունում, Լիտվայի Հանրապետությունում և այլն: Օրենսգրքում հեղինակային իրավունքի խախտումների համար օրենսդրորեն սահմանված չափով փոխհատուցման կանոնի նախատեսումը կարող է արդյունավետ միջոց դառնալ հեղինակների իրավունքների պաշտպանության, խախտված իրավունքների վերականգնման և իրավախախտումների թվի պակասեցման տեսանկյունից:

««Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը ևս պայմանավորված է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ներկայացմամբ, մասնավորապես՝ առաջարկվող լուծմամբ հանրային սննդի և սահմանափակման ենթակա ծառայությունների այն տեսակների համար, որոնք իրենց գործունեության բնույթով հանդիսանում են կոլեկտիվ կառավարող կազմակերպության ռեպերտուարի (երաժշտական ստեղծագործությունների) օգտագործողներ պարտադիր պետք է ունենան օգտագործման պայմանագիր, ինչը նաև կարող է հանդիսանալ պայման նման գործունեության թույլտվության տրամադրման համար:

««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանվել են կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների հավատարմագրման համար դիմում ներկայացնելու և հավատարմագիր ստանալու համար պետական տուրք՝ հաշվի առնելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, համաձայն որի պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների կամ վերջիններիս կողմից կատարվող գործողությունների համար պետք է վճարվի պետական տուրք, որի

նպատակն է պետական մարմինների կողմից ծառայության մատուցման հետ կապված ծախսերը փոխհատուցելը:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

Ներկայումս ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է մտավոր սեփականության իրավունքների, մասնավորապես հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների հուսալի և արդյունավետ պաշտպանության ապահովմանը, ինչը ենթադրում է համապատասխան օրենսդրության հստակեցում և իրավակիրարկման ոլորտի խնդիրների վերացում: Մյուս կողմից իրականացվող քաղաքականությունը ենթադրում է, որ այդ իրավունքների տրամադրումն ու կիրարկումը պետք է համապատասխանի նաև հանրության շահերին և բացառի չարաշահման հնարավորությունները:

4. Կարգավորման նպատակը և բնույթը.

Նախագծերի նպատակը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների իրավական պահպանության օրենսդրության կատարելագործումն է՝ բնագավառի ներկա միջազգային զարգացումներին համարժեք մոտեցումների սահմանման ու մեխանիզմների կիրառման իրավական հիմքեր ստեղծելու միջոցով: Նախագծերը նախագծելուց հաշվի են առնվել բնագավառում գործող միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:

Նախագծով առաջարկվում է վերանայել կոլեկտիվ կառավարման գործող համակարգը՝ նպատակ ունենալով այն համապատասխանեցնել միջազգային լավագույն փորձին և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին: Հիմնական փոփոխությունները ներառում են հետևյալը.

1. **Հավատարմագրման (ակրեդիտացիայի) համակարգի ներդրում**
   Նախագծով նախատեսվում է պետական մակարդակով հաստատել հավատարմագրման գործընթաց, որի միջոցով հնարավոր կլինի որոշակի կատեգորիայի համար ճանաչել միայն մեկ կառավարման կազմակերպություն՝ որպես հավատարմագրված կոլեկտիվ կառավարման մարմին: Վերջինս կստանա բացառիկ իրավասություն տվյալ կատեգորիայի գույքային իրավունքների կոլեկտիվ կառավարման հարցում:
2. **Ընդլայնված կառավարման հնարավորության ամրագրում**
   Նախագծով նախատեսվում է, որ հավատարմագրված կոլեկտիվ կառավարման

կազմակերպությունն իր իրավասության շրջանակում կառավարի նաև այն իրավատերերի գույքային իրավունքները, ովքեր գրավոր կերպով չեն հրաժարվել կառավարմանը մասնակցելուց, նույնիսկ եթե անհատական պայմանագիր չեն կնքել կազմակերպության հետ: Այս մեխանիզմը համապատասխանում է ընդայնված կառավարման համակարգին, որը կիրառվում է մի շարք երկրներում:

3. **Հրաժարման իրավունքի երաշխավորում և կամավորության սկզբունքի պահպանում**

   Իրավատերերին տրամադրվում է իրավունք՝ ցանկացած պահի ամբողջությամբ կամ մասնակի կերպով հրաժարվել հավատարմագրված կազմակերպության կողմից իրենց իրավունքների կառավարումից՝ ներկայացնելով գրավոր ծանուցում: Նախագծով սահմանվում է, որ իրավատերերը հնարավորություն ունեն պահպանելու իրենց իրավունքների ինքնուրույն կամ անհատական կառավարման իրավունքը:

4. **Միակ հավատարմագրման սկզբունք ըստ կատեգորիայի**

   Սահմանվում է, որ նույն կատեգորիայի (օրինակ՝ հրապարակային կատարման, հեռարձակման և այլն) գույքային իրավունքների համար չի կարող հավատարմագրվել մեկից ավելի կառավարման կազմակերպություն, այսպիսով ձևավորելով մրցակցության միջոցով ընտրված, բայց կարգավորվող կենտրոնացված կառավարման մոդել:

5. **Հստակ տեխնիկական ու էլեկտրոնային միջոցների սահմանում,** որոնք կապահովեն մի կողմից՝ ավտոմատացված տվյալների հավաքագրումը օգտագործման հետ կապված, իսկ մյուս կողմից՝՝ կապահովեն հավաքագրված միջոցների արդարացի բաշխումը:

6. **Սահմանել հեղինակային ու հարակից իրավունքների խախտման համար հստակ փոխհատուցման չափեր**՝ օրենքով սահմանված ֆիքսված փոխհատուցման հնարավորությամբ, իսկ օրենքի հիման վրա վարձատրության նվազագույն չափեր սահմանված լինելու դեպքում՝ դրանց կրկնակիի չափով փոխհատուցման կարգավորմամբ, ինչը կապահովի նաև կոլեկտիվ կառավարման արդյունավետությունը:

Այս փոփոխությունները միտված են հասնելու հետևյալ նպատակներին՝

- Ապահովել համակարգի թափանցիկությունը և պատասխանատվությունը,

- Իրավատերերին ապահովել կառավարման ընտրության հնարավորությամբ,
- Համապատասխանեցնել ՀՀ օրենսդրությունը միջազգային համաձայնագրերին, ինչպես նաև միջազգային փորձի վրա հիմնված կառավարող կազմակերպությունների մոդելին:

Միջազգային փորձը ցուցադրում է տարբեր մոտեցումներ կոլեկտիվ կառավարման համակարգի կազմակերպման վերաբերյալ՝ սկսած բաց, բազմակազմ մոդելներից մինչև խիստ պետական վերահսկվող կենտրոնացված համակարգեր: Ստորև ներկայացվում է տարբեր երկրների կոլեկտիվ կառավարման համակարգի վերլուծություն:

Գերմանիայում՝ Գերմանական օրենսդրությունը ճանաչում է GEMA-ն որպես փաստացի մենաշնորհ, և ապացուցման բեռը դրվում է իրավախախտի վրա՝ ցույց տալու, որ տվյալ ստեղծագործությունը չի կառավարվում GEMA-ի կողմից: GEMA-ն ունի երաժշտական ստեղծագործությունների կառավարման ամենաարդյունավետ և շահութաբեր համակարգերից մեկը: Գերմանիայի օրենսդրությամբ նախատեսված է, որ հեղինակային և հարակից իրավունքների կոլեկտիվ կառավարումը իրականացնելու համար այդ կազմակերպությունները պետք է անցնեն **պետական «հավատարմագրման» կամ «ակրեդիտացման» գործընթաց**: **Verwertungsgesellschaftengesetz (VGG)**-ի՝ Գերմանիայի **«Կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների մասին օրենք»-ի 77-րդ հոդվածը սահմանում է, որ** *«Հավաքագրման կազմակերպությունը (այսինքն՝ կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը) պետք է սպանա թույլտվություն՝ հեղինակային իրավունքի օրենքից բխող հեղինակային կամ հարակից իրավունքները կառավարելու համար»:* **Նույն օրենքի 78-րդ հոդվածում** նկարագրված է պետական մարմնին ներկայացվող ուսումնասիրման հատուկ պայմանները, *ինչպես օրինակ կանոնադրություն, իրավաբնական ներկայացուցչության փվյալներ ու գործնական բիզնես պլան*[1]*:* Այսպիսով, Գերմանական օրենսդրությամբ CMO–ները **ոչ միայն պետք է գրանցված լինեն**, այլ նաև անցնեն **պետական հավանացման (ակրեդիտացիայի)** գործընթաց:

Ֆրանսիայում՝ SACEM-ը երաժշտական ստեղծագործությունների կոլեկտիվ կառավարման հիմնական ընկերությունն է՝ Société des auteurs et compositeurs dramatiques (SACD), որը կառավարում է օպերա, բալետ և մյուզիքլներ: Այնուամենայնիվ,

[1] https://www.gesetze-im-internet.de/englisch_vgg/englisch_vgg.pdf

այն չունի իրավական մենաշնորհ, չնայած այն փաստացի վայելում է ֆրանսիական և եվրոպական դատարանների նախադեպային իրավունքով ճանաչված մենաշնորհ:

Հունգարիայում՝ գործում է **իրավական մենաշնորհ**՝ կոլեկտիվ կառավարման ոլորտում: Սա նշանակում է, որ որոշ իրավունքների կառավարման գործառույթները կարող են իրականացվել միայն **միակ պետականորեն ճանաչված կազմակերպության կողմից**, և անհատական կառավարումը թույլատրված չէ[2]: Օրինակ՝ Հունգարիայի հեղինակային իրավունքի կենտրոնական կազմակերպությունը՝ **Artisjus**, միակ լիազորված մարմինն է հրապարակային կատարման և մի շարք այլ իրավունքների կառավարման համար:

Խորվատիայում՝ կոլեկտիվ կառավարման իրավունքները կարող են տնօրինվել միայն այն կազմակերպությունների կողմից, որոնք **հավանություն են ստացել Պետական կարգավորիչ մարմնից՝ State Intellectual Property Office (SIPO, կամ DZIV)** և այդ հավանությունը տրվում է **յուրաքանչյուր իրավունքի տեսակով մեկ կազմակերպության** միայն՝ ըստ անդամների քանակի և միջազգային ներկայացվածության: Խորվատիան օգտագործում է **պետական կարգավորմամբ պայմանավորված մենաշնորհային մոդել**[3], որը խիստ կառավարվում է (DZIV) -ի կողմից: DZIV-ը պետական վարչական մարմին է, որն իր իրավասությունների շրջանակում զբաղվում է մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ոլորտով:

Չինաստանում՝ երաժշտական ստեղծագործությունների կոլեկտիվ կառավարման կազմակերպությունը (Music Copyright Society of China, MCSC) հիմնադրվել է պետության մասնակցությամբ և գտնվում է Չինաստանի կառավարության վերահսկողության ներքո: Երաժշտական ստողծագործությունների կոլեկտիվ կառավարման մասով այն հանդիսանում է միակ կազմակերպությունը երկրի տարածքում (բացառությամբ Հոնկոնգի, Մակաոյի և Թայվանի) և գործում է որպես մենաշնորհային մարմին՝ հեղինակի գույքային իրավունքների կոլեկտիվ կառավարման ոլորտում:

Ըստ կազմակերպության կանոնադրության 3 հոդվածի՝ *այն ենթարկվում է Չինաստանի Կոմունիստական կուսակցության ընդհանուր ղեկավարությանը, վերահսկվում է Քաղաքացիական գործերի նախարարության և Կենտրոնական*

[2] https://en.wikipedia.org/wiki/Copyright_collective
[3] https://www.culturalpolicies.net/country_profile/croatia-4-1-6/

քարոզչության վարչության կողմից, իսկ կուսակցական աշխատանքները համակարգվում են Կենտրոնական սոցիալական աշխատանքի վարչության կողմից: MCSC-ի իրավասությունները սահմանվում են «ՉԺՀ հեղինակային իրավունքի մասին» օրենքի 8 - րդ հոդվածով և պետական կարգավորումներով[4]:

Ռուսաստանում՝ հեղինակային իրավունքների կոլեկտիվ կառավարման ոլորտում գործում է **«Ռուսաստանյան հեղինակային ընկերությունը» (РАО),** որը հանդիսանում է ոչ առևտրային հասարակական կազմակերպություն՝ իրավասու կոլեկտիվ հիմունքներով կառավարել հեղինակի գույքային իրավունքները՝ համաձայն **Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի[5]:** РАО-ն իրականացում է ստեղծագործությունների հանրային կատարման, հեռարձակման, վերարտադրման և նմանատիպ այլ օգտագործումների համար հեղինակային վարձատրության հավաքագրում: Այն իրավասու է ներկայացնել նաև այնպիսի իրավատերերի շահերը, ովքեր РАО-ի հետ պայմանագիր չեն կնքել :

Չնայած օրենսդրորեն նախատեսված է բազմակազմ կազմակերպությունների հնարավորությունը, գործնականում РАО-ն հանդիսանում է մենաշնորհային կառույց՝ հատկապես 2008 թվականից հետո պետական հավատարմագրում ստանալուց ի վեր երկու հիմնական ոլորտում՝ երաժշտական ստեղծագործությունների և տեսալսողական ստեղծագործություններում օգտագործված երաժշտության կոլեկտիվ կառավարման մասով:

Բելառուսում՝ հեղինակային և հարակից իրավունքների հավաքական կառավարման ոլորտում գործում են միայն պետական հավատարմագրված ոչ առևտրային կազմակերպություններ: Նման կառույց է, օրինակ, **Հեղինակային իրավունքների ազգային կենտրոնը,** որն իրավունք ունի կոլեկտիվ հիմունքներով կառավարել հեղինակների, կատարողների և այլ իրավատերերի գույքային իրավունքները՝ համաձայն Բելառուսի «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» օրենքի[6]: Ըստ գործող օրենսդրության և կառավարության որոշման՝ կոլեկտիվ կառավարման ոլորտում գործունեություն կարող է իրականացնել միայն պետական հավատարմագրված մեկ կազմակերպություն յուրաքանչյուր ոլորտում, ինչը օրենքով ամրագրված

---

[4] https://chinahelp.me/work/zakon-knr-ob-avtorskom-prave

[5] https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_64629/490d12044228b17af0153380340c144a9b19a603/

[6] https://www.ncip.by/avtorskie-i-smezhnye-prava/kollektivnoe-upravlenie/

մենաշնորհային կարգավորումն է: Կենտրոնը իրականացնում է, մասնավորապես, հանրային կատարման, հեռարձակման, վերարտադրման և նմանատիպ օգտագործումների համար հեղինակային վարձատրության հավաքագրում՝ ներառյալ նաև այն իրավատերերի անունից, ովքեր անհատապես պայմանագիր չեն կնքել տվյալ կազմակերպության հետ: Կենտրոնը գործում է պետական վերահսկողության ներքո և ենթակա է Բելառուսի Գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեին:

Այսպիսով, միջազգային պրակտիկան ընդհանուր առմամբ միտված է ամրագրելու **իրավատիրոջ կամքի գերակայություն**: Նույնիսկ եթե կազմակերպությունը հավատարմագրված է կամ գործում է որպես միակ կառույց, **իրավատիրոջը պետք է վերապահվի հրաժարվելու հնարավորություն**:

Նախագծով նախատեսվում են կոլեկտիվ կառավարող կազմակերպության նկատմամբ խիստ պահանջներ, որոնք գործադրվելու են առաջին հավատարմագրումից հետո:

Ընդ որում, հավատարմագրման կարգը սահմանվելու է ՀՀ կառավարության կողմից, որից հետո պատական լիազոր մարմնի կողմից ձևավորվելու է հանձնաժողով՝ հավատարմագրման գործընթացը կազմակերպելու նպատակով:

Միաժամանակ Նախագծով առաջարկվում է նախատեսել իրավատիրոջ կողմից օրենքով նախատեսված սահմանված չափով **փոխհատուցում** ստանալու հնարավորություն, որի դեպքում իրավատերը դատարանում որպես հայցվոր հանդես գալիս պարտավոր չի լինի ապացուցել, որ ինքը կրել է որևէ չափի ֆինանսական վնաս, որպեսզի պատասխանողի վրա հայցի բավարարման արդյունքում դրվի իրավատիրոջը որպես փոխհատուցում որոշակի գումար վճարելու պարտականություն, փոխարենը իրավատերը պետք է ապացուցի սոսկ հեղինակային իրավունքի օբյեկտի ապօրինի օգտագործման փաստը:

Միևնույն ժամանակ դա չի նշանակում, որ սահմանված փոխհատուցման շեմի շրջանակներում կոնկրետ գումարը որոշելիս դատարանը, այլ ուշադրության արժանի հանգամանքների հետ մեկտեղ, չի կարող հաշվի առնել նաև իրավախախտման հետևանքների ծավալը: Վիրավորանքի ու զրպարտության համար սահմանված փոխհատուցման կիրառման պրակտիկան ցույց է տալիս, որ ՀՀ դատական համակարգը ունակ է հստակ չափանիշներ սահմանել գումարի չափի որոշման համար,

ինչը արդյունավետորեն կիրառվում է ներկայումս և առկա են բազմաթիվ դատական գործեր նման փոխհատուցման պահանջներով:

Նախագծով առաջարկվում է սահմանել 20 000 ՀՀ դրամից մինչև 2 000 000 ՀՀ դրամի չափով փոխհատուցման հնարավորություն:

Մասնավորապես, նման կարգավորումներ նախատեսված են առնվազն Ռուսաստանի Դաշնությունում, Լիտվայի Հանրապետությունում, Կանադայում, Սինգապուրի Հանրապետությունում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում և այլն:

Այսպես, Ռուսաստանի Դաշնության Քաղաքացիական օրենսգրքի 1301–րդ հոդվածի համաձայն բացառիկ իրավունքի խախտման դեպքում իրավատերն իրավունք ունի վնասի փոխհատուցման փոխարեն պահանջել 10 000 ռուբլուց մինչև 5 000 000 ռուբլու չափով հատուցում[7]:

Լիտվայի Հանրապետության «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 83–րդ հոդվածի համաձայն սահմանված է նշված օրենքով պաշտպանվող իրավունքների խախտման դիմաց նվազագույն սպառողական զանգվածի 1000–ապատիկի չափով փոխհատուցում[8]:

Կանադայի Հեղինակային իրավունքի ակտի 38.1 հոդվածի համաձայն իրավատերը ակտով նախատեսված դեպքերում իրավունք ունի պահանջել ոչ պակաս քան 100 դոլարի և ոչ ավել քան 20 000 դոլարի հատուցում[9]:

Սինգապուրի Հեղինակային իրավունքի ակտի 308–րդ հոդվածի համաձայն իրավատերը իրավունք ունի պահանջել ոչ ավել քան 10 000 դոլարի կամ 200 000 դոլարի չափով (կախված խախտման առանձնահատկությունների) հատուցում[10]:

Ամերիկայի Միացյալ Նահանգների 17 U.S. Code համաձայն իրավատերը իրավունք ունի պահանջել ոչ պակաս քան 750 դոլարի և ոչ ավել քան 30 000 դոլարի չափով փոխհատուցում[11]:

Միջազգային փորձի վերոգրյալ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կիրառվում են նաև փոխհատուցման ստորին շեմեր՝ բացառելու չնչին գումարի չափով փոխհատուցում սահմանելու հնարավորություն և նկատի ունենալով հեղինակային իրավունքի խախտման հետևանքները:

---

[7] https://docs.cntd.ru/document/902019731
[8] https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/5f13b560b2b511e59010bea026bdb259?jfwid=9tq147ogj
[9] https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/C-42/page-11.html#h-103953
[10] https://sso.agc.gov.sg/Acts-Supp/22-2021/Published/20211007?DocDate=20211007&ProvIds=P16-#pr305-
[11] https://www.copyright.gov/title17/

Միաժամանակ, ոչ նյութական արժեքներին հասցված վնասի դեպքում ներկայումս էլ օրենսդրորեն նախատեսված է սահմանված չափերին համապատասխան վնասների փոխհատուցում ստանալու վերաբերյալ կարգավորումներ: Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 3000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել: Նույն հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ զրպարտության դեպքում՝ 6000-ապատիկի չափով:

Հեղինակային իրավունքների խախտման համար կարող է նախատեսվել նաև քրեական պատասխանատվություն տուգանքի ձևով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով: Ավելին, 05.05.2021թ.-ին ընդունված Քրեական օրենգրքի 227-րդ հոդվածի համաձայն՝ հեղինակային իրավունքի խախտումների դեպքում նախատեսվող տուգանքի չափը սահմանվել է անձի եկամտի, իսկ դրա բացակայության դեպքում արարքի կատարման պահին սահմանված նվազագույն աշխատավարձի 20-ապատիկի չափով, իսկ իրավաբանական անձանց դեպքում դրա եկամտի 20 տոկոսի չափով, այլ կերպ՝ շուրջ 1,360,000:

Վերոգրյալի համադրմամբ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում հեղինակային իրավունքի խախտումների համար օրենսդրորեն սահմանված չափով փոխհատուցման դրույթի նախատեսումը կարող է արդյունավետ միջոց դառնալ հեղինակների իրավունքների պաշտպանության, խախտված իրավունքների վերականգնման և իրավախախտումների թվի պակասեցման տեսանկյունից:

Հաշվի առնելով տվյալ ոլորտի մասնագետների կարծիքները և մտահոգությունները առկա է ռիսկ, որ հեղինակային իրավունքի խախտումների դեպքում դատական պրակտիկան կարող է չզարգանալ անձի պատվի, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման ինստիտուտին համահունչ և վնասի հատուցման ստորին շեմը մնա շատ ցածր: Արդյունքում հեղինակների մոտ իրենց իրավունքների պաշտպանությամբ զբաղվելու շահագրգռվածությունը կմնա ցածր մակարդակի վրա, ինչպիսին այսօր է: Հետևաբար իրավունքների պաշտպանության հարցում հեղինակների շահագրգռվածությունը խթանելու համար, որպես այլընտրանք, Նախագծով առաջարկվում է փոխհատուցման ստորին շեմ սահմանել նաև սահմանված նվազագույն աշխատավարձի 200-ապատիկը այն դեպքերի համար, երբ արտադատական կարգով իրավախախտը հրաժարվում է վերացնել խախտումը: Տվյալ

դեպքում հեղինակները վստահ կլինեն, որ իրենց իրավունքի խախտումը հիմնավոր ճանաչվելու դեպքում իրենք կստանան հատուցում, որը կարող է բավարար լինել նաև փաստաբանական ծառայություններից օգտվելու և վճարելու համար:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ առկա են դեպքեր, երբ հեղինակային իրավունք խախտող անձն ինքը տեղյակ չէ, որ իր գործողությամբ խախտում է որևէ այլ անձի հեղինակային իրավունքներ, շուկայում ցնցումներից և մեծ դժգոհություններից խուսափելու համար, նվազագույն աշխատավարձի 200-ապատիկը որպես ստորին շեմ փոխհատուցման տարբերակից օգտվելիս, մինչև դատարան դիմելը, հեղինակը պարտավոր է. (ա) գրավոր եղանակով ծանուցել իրավախախտողին իրավախախտման վերաբերյալ, (բ) պահանջել իրավախախտողից դադարեցնել իրավախախտումը, և (գ) տեղեկացնել իրավախախտումն անհապաղ չդադարեցնելու դեպքում նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից մինչև 2000-ապատիկին հասնող փոխհատուցման մասին: Միայն այն դեպքում, երբ իրավախախտողը հրաժարվել է կամ չի դադարեցնում իրավախախտումը, իրավատերն իրավունք է ստանում դիմել դատարան՝ պահանջելով նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի ստորին շեմով փոխհատուցում: Տվյալ ճանապարհով գնալիս իրավատերը (հեղինակը) կամ շատ արագ հասնում է հեղինակային իրավունքի խախտման դադարման՝ առանց փոխհատուցման, կամ ստանում է զգալի փոխհատուցում:

Արդյունքում, նախագծով իրավատիրոջը (հեղինակին) առաջարկվում են մի շարք գործիքներ, որոնց միջոցով նա կարող է ավելի արդյունավետ պայքարել իր հեղինակային իրավունքների խախտման դեմ:

Կոլեկտիվ կառավարման համատեքստում առաջարկվում է սահմանել, որ ՀՀ կառավարության կողմից վարձատրության նվազագույն դրույքաչափեր սահմանված լինելու դեպքում առաջարկվող ֆիքսված փոխհատուցումը չի գործում, սակայն փոխարենը նման դեպքում խախտողից կարող է պահանջվել սահմանված նվազագույն դրույքաչափի կրկնակիի չափով փոխհատուցումը՝ դրանով իսկ նաև ապահովելով իրավախախտումների դեմ արդյունավետ պայքարի ու պաշտպանության միջոցի առկայություն:

Նախագծի ընդունումը բխում է նաև Հայաստանի վերափոխման 2050 ռազմավարության 14-րդ և 15-րդ նպատակներից:

5. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագծերը մշակվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից:

6. Այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության առկայության մասին.

Նախագծերի ընդունմամբ անհրաժեշտություն կառաջանա ընդունելու «Ստեղծագործությունների հրապարակային կատարման, հեռարձակման, ձայնագրությունների միջոցով վերարտադրության, հնչյունագրերի կամ տեսագրությունների միջոցով հանրությանը հաղորդելու, վարձույթով տալու, դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործություններն արդյունաբերության մեջ վերարտադրելու համար հեղինակային վարձատրության, կատարումներն ու հնչյունագրերն օգտագործելու համար նվազագույն դրույքաչափերը սահմանելու և ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի N 506 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա:

7. Առաջարկվող լուծումը և ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունումը կապահովի առկա խնդիրների լուծումը, ինչը հնարավորություն կտա հուսալի և արդյունավետ կարգավորել հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների հետ կապված հարաբերությունները: Բացի դրանից, նախագծերի ընդունումը բավարար իրավական հիմքեր կստեղծի բնագավառի միջազգային ինտեգրման գործընթացների համար:

Օրենքի փոփոխությամբ ակնկալվում է ներդնել կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների պետական հավատարմագրման ու վերահսկողության ընթացակարգեր, ներդնել հեղինակային և հարակից իրավունքների ընդլայնված կառավարման իրավական մեխանիզմ, ինչպես նաև իրավունքների պաշտպանության արդյուանվետ միջոցներ:

Այս փոփոխությունները թույլ կտան բարձրացնել ոլորտի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, սահմանել արդյունավետ պետական վերահսկողություն և

ապահովել ՀՀ միջազգային պարտավորությունների, այդ թվում՝ ԵԱՏՄ վավերացված համաձայնագրի և Հայաստան-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) պահանջների կատարումը:

8. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ:

Նախագիծն առնչվում է ՀՀ կառավարության 18.08.2021թ. թիվ 1363-Ա որոշմամբ նախատեսված «2. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» միջոցառմանը, որի արդյունքում ակնկալվում է ստեղծել ստեղծագործական և ներդրումային բարենպաստ միջավայր, մտավոր սեփականության իրավունքի արդյունավետ և հուսալի պահպանություն և պաշտպանություն ապահովելու նպատակով: